ԵԴ/0587/01/20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

21 հուլիսի 2025 թվական ք.Երևան

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քրեական պալատը,

նախագահությամբ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

ուսումնասիրելով թիվ ԵԴ/0587/01/20 քրեական վարույթի ընդդատության հարցը լուծելու համար Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2025 թվականի հուլիսի 10-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2020 թվականի հունիսի 12-ին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում ստացվել է թիվ 13121520 (ԵԴ/0587/01/20) քրեական գործն ըստ մեղադրանքի՝ Բենիկ Սարգսի Գաբրիելյանի՝ 2003 թվականի ապրիլի

18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ նաև ՀՀ քրեական օրենսգիրք) 266-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, 235-րդ հոդվածի 4-րդ մասով, 185-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով, 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, Մանվել Արմենակի Շամիլյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 216-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և Մովսես Աշոտի Սողբաթյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 216-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և 334-րդ հոդվածի 1-ին մասով:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր Ա.Թադևոսյան) 2020 թվականի հունիսի 15-ին որոշում է կայացրել թիվ ԵԴ/0587/01/20 քրեական գործը վարույթ ընդունելու մասին:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2020 թվականի հունիսի 26-ին որոշում է կայացրել թիվ ԵԴ/0587/01/20 քրեական գործը դատական քննության նշանակելու մասին:

2021 թվականի մայիսի 6-ին թիվ ԵԴ/0587/01/20 քրեական գործը վերաբաշխվել է դատավոր Ա.Գաբրիելյանին:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2021 թվականի մայիսի 7-ին որոշում է կայացրել թիվ ԵԴ/0587/01/20 քրեական գործը վարույթ ընդունելու մասին:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2021 թվականի մայիսի 21-ին որոշում է կայացրել թիվ ԵԴ/0587/01/20 քրեական գործը դատական քննության նշանակելու մասին:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2022 թվականի փետրվարի 2-ին թիվ ԵԴ/0587/01/20 քրեական գործով անցում է կատարել դատաքննության փուլ:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2024 թվականի մարտի 12-ին որոշում է կայացրել Մովսես Աշոտի Սողբաթյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 216-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և 334-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը դադարեցնել՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով:

3. 2025 թվականի հունիսի 13-ին թիվ ԵԴ/0587/01/20 քրեական գործը վերաբաշխվել է դատավոր Ա.Մելիքսեթյանին:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2025 թվականի հունիսի 17-ին թիվ ԵԴ/0587/01/20 քրեական վարույթն ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2025 թվականի հունիսի 26-ին՝ նախնական դատալսումների ընթացքում, որոշում է կայացրել քրեական վարույթն ըստ ընդդատության Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ուղարկելու մասին:

4. Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր Հ.Մեխակյան) 2025 թվականի հուլիսի 10-ին որոշում է կայացրել թիվ ԵԴ/0587/01/20 քրեական վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին՝ ընդդատության հարցը լուծելու համար:

5. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2025 թվականի հուլիսի 14-ին:

<u>Ընդդատության հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

6. Նախաքննության մարմնի որոշմամբ Բ.Գաբրիելյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, 235-րդ հոդվածի 4-րդ մասով, 185-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով և 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով այն բանի համար, որ *«(...) նա մի խումբ անձանց հետ միասին պայթեցման և խոշոր չափերի գույքը դիտավորյալ ոչնչացման եղանակով կատարել է ուրիշի առանձնապես խոշոր չափերի՝ 18.466.000 ՀՀ դրամ կանխիկ գումարի հափշտակություն, իր մոտ ապօրինի պահել է սառը զենք հանդիսացող հարվածող-փշրող կոփազենք, բացի այդ «Արմավիր» ՔԿ հիմնարկում գտնվելու ժամանակ իրացման նպատակով ձեռք է բերել «Մարիխուանա» տեսակի թմրամիջոց և փորձել այն առաքել:*

Այսպես.

Բենիկ Սարգսի Գաբրիելյանը, խախտելով «Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի մասին ՀՀ օրենքի» 11-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջը, այն է՝ չունենալով բժշկական նպատակով կամ բժշկի նշանակմամբ թմրամիջոցների և հոգեմետ նյութերի շրջանառությունն իրականացնելու, թմրամիջոց ձեռք բերելու և պահելու թույլտվություն, լինելով ՀՀ ԱՆ «Արմավիր» ՔԿՀ-ում պահվող կալանավորված անձ, քննությամբ չպարզված անձից իրացման նպատակով ապօրինի ձեռք է բերել 0,21 գրամ հաստատուն քաշով «Մարիխուանա» տեսակի թմրամիջոց, որը ցանկացել է ապօրինի առաքել ՔԿՀ-ի պատժախցում գտնվող դատապարտյալ Արթուր Առաքելյանին: Այդ նպատակով նա «Արարատ» տեսակի ծխախոտի տուփի մեջ տեղավորել է նշված թմրամիջոցը, տուփը դրել սննդամթերքով լցված երկու պոլիեթիլենային փաթեթներից մեկի մեջ և 2018 թվականի նոյեմբերի 17-ին նույն ՔԿՀ-ի դատապարտյալ, 3-րդ տեղամասի սնունդ բաժանող Աբրահամ Ավետիսի Սարգսյանին հանձնել նշված փաթեթները՝ խնդրելով սնունդ բաժանելու գործն ավարտելուց հետո դրանք փոխանցել ՔԿՀ-ի պատժախցում գտնվող Արթուր Առաքելյանին: Դատապարտյալ Աբրահամ Սարգսյանը, առանց ստուգելու պոլիէթիլենային տոպրակների պարունակությունը, վերցրել է դրանք և գնացել ճաշարան: Ժամը 19:05-ի սահմաններում, երբ վերջինս սննդամթերք տեղափոխելու համար նախատեսված սայլակով դուրս է եկել ճաշարանից, ՔԿՀ-ի ծառայողների կողմից ենթարկվել է անձնական խուզարկության, որի ընթացքում Բենիկ Գաբրիելյանի կողմից փոխանցված պոլիեթիլենային տոպրակում գտնվող «Արարատ» տեսակի ծխախոտի տուփի մեջ հայտնաբերվել է վերջինիս կողմից թաքցված նշված թմրամիջոցն ու վերցվել:

(...)

Բացի այդ՝ Բենիկ Սարգսի Գաբրիելյանը, խախտելով ՀՀ «Զենքի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի «Ե» կետի պահանջները, ապօրինի կերպով ձեռքի պայուսակում կրել է մեկ հատ հարվածող-փշրող սառը զենք հանդիսացող ինքնաշեն եղանակով կոփազենքի նմանողությամբ պատրաստված արծաթափայլ գույնի ներկանյութով պատված մետաղյա առարկա, որն էլ 2019 թվականի ապրիլի 10-ին՝ ժամը 18:00-ին, հայտնաբերվել է ոստիկանության Վաղարշապատի բաժնի ԱԳԲ և

ԸԲԿ բաժանմունքի ծառայողների կողմից Վաղարշապատի բաժնում՝ վերջինիս անձնական խուզարկությամբ:

(...)

Բացի այդ՝ Բենիկ Սարգսի Գաբրիելյանը, գործով ինքնությունները չպարզված անձանց հետ նախնական համաձայնության է եկել «ՎՏԲ Հայաստան բանկ» ՓԲ ընկերությանը պատկանող, պահեստարան հանդիսացող վճարահաշվարկային տերմինալից առանձնապես խոշոր չափերի գույքի գաղտնի հափշտակություն կատարելու շուրջ: Հանցավոր մտադրությունն իրականացնելու նպատակով Բենիկ Գաբրիելյանը 2019 թվականի հուլիսի 28-ին՝ ժամը 04:00-ից մինչև 05:00-ն ընկած ժամանակահատվածում, խմբի կազմում Երևան քաղաքի Արմենակյան 127 հասցեում գտնվող «ՎՏԲ Հայաստան բանկ» ՓԲ ընկերությանը պատկանող, պահեստարան հանդիսացող վճարահաշվարկային տերմինալը գազաթթվածնային խառնուրդի բռնկման միջոցով պայթեցրել են՝ տերմինալի վնասման արդյունքում «ՎՏԲ Հայաստան բանկ» ՓԲ ընկերությանը դիտավորությամբ պատճառելով 2.500.000 ՀՀ դրամի գույքային վնաս: Պայթեցման արդյունքում հնարավորություն ստանալով մուտք գործել պահեստարան հանդիսացող տերմինալ, այնտեղից, ինչպես նաև պայթեցման հետևանքով դուրս թափված գումարից գաղտնի հաշտշտակել են առանձնապես խոշոր չափերով՝ 18.466.000 ՀՀ դրամը, որը ներկված է եղել պաշտպանիչ ներկանյութով:

Նշված գումարը հափշտակելուց հետո Բենիկ Գաբրիելյանը հանդիպել է իր ծանոթ Մովսես Աշոտի Սողբաթյանին և նրա հետ պայմանավորվածություն ձեռք բերել՝ իր մոտ առկա, կանաչ ներկանյութով պատված մոտ 10.000.000 ՀՀ դրամ գումարը ներկանյութից մաքրելու շուրջ: Ստանալով Մովսես Սողբաթյանի համաձայնությունը և նախապես չտեղեկացնելով գումարի ծագման աղբյուրի մասին, 13.265.000 ՀՀ դրամ գումար հանձնել է Մովսես Սողբաթյանին՝ խոստանալով մաքրելուց հետո վճարել տրված գումարի 10 տոկոսը: Դրանից հետո Մովսես Սողբաթյանը, տեղեկանալով նշված գումարի՝ հանցավոր եղանակով ձեռք բերված լինելու մասին, իր ընտանիքին պատկանող ու ժամանակավորապես չբնակեցվող Արմավիրի մարզի Վաղարշապատ քաղաքի Կարճիկյան փողոցի 1-ին շենքի 25-րդ բնակարանում Բենիկ Գաբրիելյանի ուղղորդմամբ հատուկ ներկանյութերով մաքրել

է հանցավոր ճանապարհով ձեռք բերված թղթադրամներից, որից 3.200.000 ՀՀ դրամն առձեռն փոխանցել է Բենիկ Գաբրիելյանին և Մանվել Շամիլյանին: Վերջիններիս կողմից իրացվելուց հետո կիսով չափ ներկայությամբ 872.000 ՀՀ դրամը, տարբեր վայրերում տեղադրված «Տել Սել» վճարային տերմինալներում և «Գուդվին Բեթ» ՍՊ ընկերությանը պատկանող խաղային ապարատներում հայտաբերվել են, իսկ ընդհանուր 10.034.000 ՀՀ դրամ գումարն էլ հայտնաբերվել և վերցվել է 2019 թվականի օգոստոսի 27-ին ՀՀ ոստիկանության Արմավիրի մարզային վարչության Վաղարշապատի բաժնում Մովսես Սողբաթյանի անձնական խուզարկությամբ: (…)»[1]*:*

6.1. Նախաքննության մարմնի որոշմամբ Մանվել Արմենակի Շամիլյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 216-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով այն բանի համար, որ *«(…) նա ձեռք է բերել ակնհայտ հանցավոր ճանապարհով ձեռք բերված առանձնապես խոշոր չափերի գույք և իրացրել:*

Այսպես.

Բենիկ Սարգսի Գաբրիելյանը, գործով ինքնությունները չպարզված անձանց հետ միասին, առանձնապես խոշոր չափերի գույք գաղտնի հափշտակելու շուրջ նախնական համաձայնության գալով, խմբի կազմում 2019 թվականի հուլիսի 28-ին՝ ժամը 04:00-ից մինչև 05:00-ն ընկած ժամանակահատվածում, Երևան քաղաքի Արմենակյան 127-րդ հասցեում գտնվող «ՎՏԲ Հայաստան բանկ» ՓԲ ընկերությանը պատկանող, պահեստարան հանդիսացող վճարահաշվարկային տերմինալից գաղտնի հափշտակել են առանձնապես խոշոր չափերի՝ 18.466.000 ՀՀ դրամ կանխիկ գումար:

Այնուհետև, Մովսես Աշոտի Սողբաթյանը հանդիպել է իր ծանոթ Բենիկ Գաբրիելյանին, որի ընթացքում նրա հետ պայմանավորվածություն է ձեռք բերել վերջինիս մոտ առկա կանաչ ներկայությամբ պատված գումարը ներկայությից մաքրելու շուրջ, որից հետո, Բենիկ Գաբրիելյանը, ստանալով Մովսես Սողբաթյանի համաձայնությունը, 13.265.000 ՀՀ դրամ գումարը հանձնել է Մովսես Սողբաթյանին՝ խոստանալով վճարել տրված գումարի 10 տոկոսի չափով: Մանվել Շամիլյանը,

[1] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 7, թերթեր 22-25:

տեղյակ լինելով նշված գումարի գաղտնի հափշտակված լինելու հանգամանքի մասին, Բենիկ Գաբրիելյանի հետ ուղղորդել են Մովսես Սողբաթյանին՝ հնարավորին արագ մաքրել գումարները ներկված կանաչ ներկածածկույթից: Վերջինս իր ընտանիքին պատկանող ու ժամանակավորապես չբնակեցվող Արմավիրի մարզի Վաղարշապատ քաղաքի Կարճիկյան փողոցի 1-ին շենքի 25-րդ բնակարանում հատուկ ներկանյութերով մաքրել է հանցավոր ճանապարհով ձեռք բերված թղթադրամները, որից 3.200.000 ՀՀ դրամն առձեռն փոխանցել է Բենիկ Գաբրիելյանին ու Մանվել Շամիլյանին: Մանվել Շամիլյանը, հատուկ տեղյակ լինելով նշված գումարի՝ հանցավոր ճանապարհով ձեռք բերված լինելու մասին, վերցրել է դրանք և իրացրել տարբեր վայրերում, որոնցից 872.000 ՀՀ դրամը, տարբեր վայրերում տեղադրված «Տել Սել» վճարային տերմինալներում և «Գուդվին Բեթ» ՍՊ ընկերությանը պատկանող խաղային ապարատներում հայտնաբերվել են: (…)»[2]*:*

7. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2025 թվականի հունիսի 26-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) [Ս]ույն քրեական գործի նյութերի ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ վարույթով ներգրավված մեղադրյալներին մեղսագրվող արարքներից վերջինը, մասնավորապես Մ.Շամիլյանին վերագրվող արարքը կատարվել է Արմավիր մարզում, այլ կերպ՝ վերջին արարքը կատարվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատական տարածքից դուրս, իսկ այն պարագայում, երբ առկա են տարբեր դատարանների դատական տարածքներում ենթադրաբար կատարված երկու կամ ավելի արարքներ, ապա մեղադրանքը քննում է այն դատարանը, որի դատական տարածքում ենթադրաբար կատարվել է վերջին արարքը:*

Ուստի, ելնելով քրեադատավարական օրենսդրության պահանջներից, Դատարանը գտնում է, որ ԵԴ/0587/01/20 քրեական գործը պետք է ուղարկել ըստ տարածքային ընդդատության: (…)»[3]*:*

---

[2] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 7, թերթեր 6-7:
[3] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 13, թերթեր 22-24:

8. Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2025 թվականի հուլիսի 10-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Անդրադառնալով այն հարցին, թե Բենիկ Գաբրիելյանին և Մանվել Շամիլյանին մեղսագրված ենթադրյալ հանցանքները ո՞ր դատարանների դատական տարածքներում են ենթադրաբար կատարվել՝ Դատարանն արձանագրում է հետևյալը՝*

1) Բենիկ Գաբրիելյանին ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, 235-րդ հոդվածի 4-րդ մասով մեղսագրված ենթադրյալ հանցանքները կատարվել և ավարտվել են ՀՀ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքում՝ համապատասխանաբար 17.11.2018 թվականին և 10.04.2019 թվականին, իսկ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով ու 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով մեղսագրված ենթադրյալ հանցանքները՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատական տարածքում՝ 2 դեպքում էլ 28.07.2019 թվականին:

Վերոշարադրյալի կապակցությամբ Դատարանը փաստում է, որ Բենիկ Գաբրիելյանին մեղսագրված վերջին 2 հանցանքները ժամանակագրական առումով ենթադրաբար կատարվել են ավելի ուշ՝ 28.07.2019 թվականին, և Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատական տարածքում, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 2-րդ մասով՝ պետք է արձանագրել, որ Բենիկ Գաբրիելյանի մասով մեղադրանքը պետք է քննի Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը:

2) Ըստ ներկայացված մեղադրանքի պարզ չէ, թե Մանվել Շամիլյանին ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 216-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով մեղսագրված ենթադրյալ հանցանքը ե՞րբ և ո՞րտեղ է կատարվել ու ավարտվել: Այսպես՝ ըստ մեղադրանքի՝ Մովսես Սողբաթյանը իր ընտանիքին պատկանող ու ժամանակավորապես չբնակեցվող Արմավիրի մարզի Վաղարշապատ քաղաքի Կարմիկյան փողոցի 1-ին շենքի 25-րդ բնակարանում հատուկ ներկանյութերով ենթադրաբար մաքրել է ենթադրյալ հանցավոր ճանապարհով ձեռք բերված

թղթադրամները, որից ենթադրյալ 3.200.000 ՀՀ դրամն ենթադրաբար առձեռն փոխանցել է Բենիկ Գաբրիելյանին ու Մանվել Շամիլյանին: Մանվել Շամիլյանը, ենթադրաբար տեղյակ լինելով նշված ենթադրյալ գումարի՝ ենթադրյալ հանցավոր ճանապարհով ենթադրաբար ձեռքբերված լինելու մասին, ենթադրաբար վերցրել է դրանք և ենթադրաբար իրացրել տարբեր վայրերում, որոնցից ենթադրյալ 872.000 ՀՀ դրամը, տարբեր վայրերում տեղադրված «Տել Սել» վճարային տերմինալներում և «Գուդվին Բեթ» ՍՊ ընկերությանը պատկանող խաղային ապարատներում հայտնաբերվել են:

Վերոշարադրյալի կապակցությամբ հարկ է փաստել, որ պարզ չէ, թե Մովսես Սողբաթյանը հատուկ ներկայությերով ենթադրաբար մաքրած ենթադրյալ հանցավոր ճանապարհով ձեռք բերված թղթադրամները որտե՞ղ է առձեռն ենթադրաբար փոխանցել Մանվել Շամիլյանին, հետևաբար կարելի է արձանագրել, որ ենթադրյալ հանցավոր ճանապարհով Մանվել Շամիլյանի կողմից թղթադրամները ձեռք բերելու վայրն ըստ մեղադրանքի հայտնի չէ:

Հայտնի չէ նաև, թե որտեղ է Մանվել Շամիլյանը ենթադրյալ հանցավոր ճանապարհով ձեռք բերված թղթադրամները ենթադրաբար իրացրել, քանի որ ներկայացված մեղադրանքում նշված է տարբեր վայրերից՝ չնշելով, թե կոնկրետ որտեղից:

Վերոշարադրյալի պայմաններում Դատարանն արձանագրում է, որ նմանատիպ դեպքերի համար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված է հատակ կարգավորում՝ համաձայն որի՝ եթե մինչդատական վարույթի ընթացքում հնարավոր չի եղել պարզել ենթադրյալ հանցանքի կատարման վայրը, ապա մեղադրանքը քննում է այն դատարանը, որի դատական տարածքում է գտնվում մինչդատական վարույթն իրականացրած նախաքննության մարմնի նստավայրը, իսկ սույն քրեական գործով նախաքննությունը կատարվել է ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի կողմից, որը գտնվում է Երևան քաղաքում: Ուստի Դատարանի համար առնվազն անհասկանալի է, թե Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի կողմից ինչպե՞ս է արձանագրվել, որ Մանվել Շամիլյանին

վերագրվող ենթադրյալ արարքը ենթադրաբար կատարվել է Արմավիրի մարզում: (…)»[4]:

<u>Վճռաբեկ դատարանի քրեական պալատի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

9. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյո՞ք Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԵԴ/0587/01/20 քրեական վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին:

10. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

11. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (…) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք*»:

11.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»*[5]:

Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ *«Ներպետական*

---

[4] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 13, թերթեր 31-35:

[5] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»[6]:

12. Վճռաբեկ դատարանը *Գևորգ Հարությունյանի* գործով իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «*(…) Գործերի պատշաճ ընդդատությունը, որպես արդար դատաքննության անհրաժեշտ բաղկացուցիչ, հիմնարար իրավական արժեք է: Դրա հիմնարար բնույթը բխում է արդար դատաքննության ինստիտուցիոնալ տարրից՝ անկախ, անկողմնակալ, իրավասու և օրենքի հիման վրա ստեղծված դատարան ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունից: Իսկ այդ պարտականությունն իր հերթին, ըստ էության, ամրագրված է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող այնպիսի նորմատիվ ակտերում, ինչպիսիք են ՀՀ Սահմանադրությունը (…), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (14-րդ հոդված) և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (6-րդ հոդված): (…)*

Պատշաճ ընդդատության հիմնարար իրավական նշանակությունն այն է, որ յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործը քննող դատարանի որոշման հստակ կանոնների առկայությունը և դրանց կանխատեսելի գործադրումն անհրաժեշտ պայման են կողմնակի դիտորդի մոտ այնպիսի համոզմունք ձևավորելու համար, որ տվյալ կոնկրետ քրեական գործը քննող դատարանը և դատավորը նախատրամադրվածություն չունեն, և տվյալ գործը վարույթ ընդունելիս սուբյեկտիվիզմն ու կամայականությունը բացառված են եղել:

Այսպիսով, քրեական գործերի ընդդատության որոշման հստակ, կամայականությունը բացառող կանոնների առկայությունը և գործադրումը պարտադիր նախապայման են արդարադատության մատչելիության պատշաճ երաշխավորման համար (…)»[7]:

---

[6] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

[7] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

13. Վերոգրյալից հետևում է, որ ընդդատության կանոններն այն չափանիշներն են, որոնց հիման վրա որոշվում է, թե տվյալ գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն: Այդ չափանիշների հիմքում ընկած են ոչ թե իրավակիրառների սուբյեկտիվ հայեցողությունը, այլ քրեական վարույթի օրենքով սահմանված օբյեկտիվ հատկանիշները, որոնց առկայությունն էլ թույլ է տալիս արձանագրել տվյալ դատարանի՝ այդպիսին հանդես գալու իրավունքն այդ վարույթով: Միաժամանակ, ընդդատության կանոնները կոչված են անձին զերծ պահելու դատական շրջապտույտներից, որոնք կարող են առաջանալ, եթե դատարանները հրաժարվեն գործը վարույթ ընդունել իրենց ընդդատյա չլինելու պատճառաբանությամբ:

Ընդդատության ինստիտուտը հիմնարար նշանակություն ունեցող արժեք է, քանի որ այն անմիջականորեն կապված է անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի հետ: Քրեական վարույթի մասնակիցների համար պետք է կանխատեսելի լինի, թե իրենց գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն:

Անհրաժեշտ է ընդգծել, որ վարույթն ըստ ընդդատության փոխանցելիս, չպետք է դրսևորվի չափազանց ձևական մոտեցում, և պետք է հաշվի առնվի նաև արդարադատության շահը:

14. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի համաձայն՝ «*1. Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին ընդդատյա են այն վարույթները, որոնք վերաբերում են այդ դատարանի դատական տարածքում ենթադրաբար կատարված հանցանքներին՝ անկախ քննչական ենթակայության կանոններից:*

2. Եթե վարույթը վերաբերում է առաջին ատյանի ընդհանուր իրավասության տարբեր դատարանների դատական տարածքներում ենթադրաբար կատարված երկու կամ ավելի հանցանքներին, ապա մեղադրանքը քննում է այն դատարանը, որի դատական տարածքում ենթադրաբար կատարվել է վերջին հանցանքը:

3. Եթե մինչդատական վարույթի ընթացքում հնարավոր չի եղել պարզել սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված՝ ենթադրյալ հանցանքների կատարման վայրը, ապա մեղադրանքը քննում է այն դատարանը, որի դատական

տարածքում է գտնվում մինչդատական վարույթն իրականացրած նախաքննության մարմնի նստավայրը: (...)»:

Նույն օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ *«(...) 4. Վարույթն ըստ տարածքային ընդդատության ստացած առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատաքննություն նշանակելը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին, եթե համաձայն չէ վարույթի տարածքային ընդդատությանը:*

(...)

7. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի քրեական պալատը վարույթը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում վերջնականապես լուծում է վարույթի տարածքային ընդդատության հարցը: (...)»:

15. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Բենիկ Գաբրիելյանի և Մանվել Շամիլյանի վերաբերյալ թիվ 13121520 քրեական գործով նախաքննությունն իրականացվել է ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնում:

- սույն քրեական գործը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան է ստացվել 2020 թվականի հունիսին, որից հետո վերաբաշխվել է մեկ այլ դատավորի: Դրանից հետո Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2022 թվականի փետրվարի 2-ին թիվ ԵԴ/0587/01/20 քրեական գործով անցում է կատարել դատաքննության փուլ, այնուհետև՝ 2025 թվականի հունիս 13-ին քրեական վարույթը դարձյալ վերաբաշխվել է: Այնուհետև Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2025 թվականի հունիսի 26-ին որոշում է կայացրել քրեական վարույթն Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ուղարկելու մասին, փաստելով, որ վարույթով ներգրավված մեղադրյալներին

մեղսագրվող արարքներից վերջինը՝ Մ.Շամիլյանին վերագրվող արարքը, ենթադրաբար կատարվել է Արմավիր մարզում[8]:

- Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, փաստելով, որ Մ.Շամիլյանին ներկայացված մեղադրանքից պարզ չէ, թե վերջինս ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 216-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով մեղսագրված ենթադրյալ հանցանքը որտեղ է կատարել, գտել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ քրեական վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին[9]:

16. Նախորդ կետում վկայակոչված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշմամբ մեջբերված իրավադրույթների և իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ հարկ է արձանագրել, որ համաձայն Մ.Շամիլյանին առաջադրված մեղադրանքի՝ նրան վերագրվող ենթադրյալ հանցանքն ավարտվել է հանցավոր ճանապարհով ձեռք բերված գումարը վերջինի կողմից տարբեր վայրերում իրացնելով: Վճռաբեկ դատարանի քրեական պալատը փաստում է, որ Մ.Շամիլյանին առաջադրված մեղադրանքի բովանդակությունից հնարավոր չէ պարզել վերջինիս կողմից վերոնշյալ գործողությունների կատարման վայրը, հետևաբար, ընդունելի է Արմաիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատողությունը, որ սույն վարույթի տարածքային ընդդատությունը որոշելիս, պետք է հիմք ընդունել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 3-րդ մասի կարգավորումը, համաձայն որի՝ մեղադրանքը պետք է քննի այն դատարանը, որի դատական տարածքում է գտնվում մինչդատական վարույթն իրականացրած նախաքննության մարմնի նստավայրը: Սույն վարույթով մինչդատական վարույթն իրականացվել է ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնում, որի նստավայրը գտնվում է Երևան քաղաքում:

17. Վերոգրյալի հետ մեկտեղ, Վճռաբեկ դատարանի քրեական պալատը հարկ է համարում ընդգծել, որ սույն վարույթով **առերևույթ առկա է դատական**

---

[8] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:
[9] Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

շրջապտույտի, գործի ողջամիտ ժամկետում քննության և դրանից ածանցվող այլ իրավունքների խախտման վտանգ, հաշվի առնելով, որ սույն քրեական գործը **2020 թվականի հունիսից գտնվում է առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների վարույթում, սակայն մինչ օրս գործի քննությունը գտնվում է նախնական դատալսումների փուլում:**

18. Վերոշարադրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԵԴ/0587/01/20 քրեական վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին, հիմնավոր է:

19. Ամփոփելով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ թիվ ԵԴ/0587/01/20 վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 7-րդ մասով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը

Ո Ր Ո Շ Ե Ց

Բենիկ Սարգսի Գաբրիելյանի վերաբերյալ՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, 235-րդ հոդվածի 4-րդ մասով, 185-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով, 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և Մանվել Արմենակի Շամիլյանի վերաբերյալ՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 216-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով թիվ ԵԴ/0587/01/20 քրեական վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին:

Նախագահող՝ _____ Հ.ԱՍԱՏՐՅԱՆ

Դատավորներ՝ _____ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ

_____ Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

_____ Ա.ՊՈՂՈՍՅԱՆ